ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՑԿԱՑՎԱԾ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26.11.2020թ. **ք. Երևան**

Դատավորների թեկնածուների ցուցակի համալրման համար անցկացված որակավորման գրավոր քննության բողոքարկման հանձնաժողովը՝ մասնակցությամբ հանձնաժողովի նախագահ Ա. Մանուկյանի, հանձնաժողովի անդամներ Ն. Հովակիմյանի և Դ. Բալայանի (այսուհետ՝ Բողոքարկման հանձնաժողով), ուսումնասիրելով 2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից որակավորման գրավոր քննության գնահատման հանձնաժողովի (այսուհետ՝ Գնահատման հանձնաժողով) հրապարակած քննության արդյունքի դեմ ներկայացված բողոքը, մասնակցի գրավոր քննության աշխատանքը և որակավորման գրավոր քննության հանձնաժողովի անդամների կողմից կազմված՝ որակավորման գրավոր քննության արդյունքի ստուգաթերթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

2020թ. նոյեմբերի 3-ին «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 95-105-րդ հոդվածներով սահմանված հիմքերով ու կարգով ՀՀ Բարձրագույն դատական խորհրդում կայացել է գրավոր քննություն՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով:

Քննության արդյունքներով «1793» ծածկարգրով հանդես եկած մասնակցի աշխատանքը գրավոր առաջադրանքի 1-ին խնդրից ստացել է 24, իսկ 2-րդ խնդրից՝ 27 միավոր, ընդհանուրը՝ 51 միավոր:

«ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 101-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով՝ քննության արդյունքների հրապարակումից հետո քննության՝ «1793» ծածկագրով մասնակցի կողմից ներկայացվել է բողոք՝ քննության վերոհիշյալ արդյունքի դեմ:

ա. Քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակիցը ներկայացրած բողոքով համարել է, որ գրավոր առաջադրանքի 1-ին խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերին իր կողմից տրված պատասխաններն անհայտ չափանիշով հանձնաժողովի անդամների մի մասի կողմից գնահատվել է ցածր՝ մի դեպքում 1, մյուս դեպքում՝ 2 միավոր, այն դեպքում, երբ ինքը, այդ հարցերին պատասխանելով, աշխատանքում համակողմանի անդրադարձել է քրեաիրավական վերաբերելի ինստիտուտներին՝ չնշելով միայն այն, որ գրավոր առաջադրանքում ներկայացված իրավիճակային 1-ին խնդրի 1-ին դրվագում անձանց արարքր ենթակա է եղել որակման նաև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

բ. Համաձայն քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքի՝ գրավոր առաջադրանքում ներկայացված իրավիճակային 1-ին խնդրում ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցակազմին իր կողմից կատարված անդրադարձն արդեն իսկ կանխորոշել է նույն խնդրում ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներին անդրադառնալու անհրաժեշտության բացակայությունը, իսկ իրավիճակային 1-ին խնդրի 2-րդ և 3-րդ հարցերին պատասխանելիս իր կողմից առանձին հիմնավորումներ չկատարելը, և որպես հիմնավորում 1-

ին հարցում առկա վերլուծություններին հղում կատարելը պայմանավորված է եղել ժամանակի սղությամբ:

գ. Անդրադառնալով գրավոր առաջադրանքի 2-րդ իրավիճակային խնդրի 5-րդ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վճռաբեկ վերանայման հարցի վերաբերյալ իր կողմից տրված պատասխանին՝ քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակիցը բողոքում նշել է, որ 5-րդ հարցում մանրամասն վերլուծություն չի կատարվել՝ նկատի ունենալով ժամանակի սղությունը, բացի այդ, 4-րդ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննիչ վերանայման վերաբերյալ հարցին պատասխանելիս արդեն իսկ իր կողմից համանման վերլուծությունները եղել են կատարված, իսկ գրավոր առաջադրանքի 2-րդ խնդրի 4-րդ և 5-րդ հարցերի պատասխանները ողջամտորեն փոխկապակցված են:

Ուսումնասիրելով 2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից Գնահատման հանձնաժողովի հրապարակած քննության արդյունքի դեմ ներկայացված բողոքը, մասնակցի գրավոր քննության աշխատանքը և որակավորման գրավոր քննության հանձնաժողովի անդամների կողմից կազմված՝ որակավորման գրավոր քննության արդյունքի ստուգաթերթերը, Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ.

ա. Անդրադառնալով բողոքաբերի կողմից գրավոր առաջադրանքի 1-ին իրավիճակային խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի պատասխաններին Գնահատման հանձնաժողովի կողմից տրված գնահատականների հետ վերր վկայակոչված անհամաձայնությանը, Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ գրավոր առաջադրանքի 1-ին իրավիճակային խնդրի 3-րդ հարցի կապակցությամբ բողոքաբերը ցուցաբերել է մասնագիտական լիարժեք գիտելիք, հետևաբար նշված չափանիշով հավակնորդի միավորը ենթակա է եղել գնահատման առավելագույն՝ 3 միավորով, հետևաբար նշված չափանիշով բողոքաբերի աշխատանքը 3-ից ցածր միավորով գնահատելը Բողոքարկման հանձնաժողովը հիմնավոր չի համարում:

Այդուհանդերձ, 3-րդ հարցին բողոքաբերի կողմից տրված պատասխանի մյուս չափանիշների կապակցությամբ Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ այդ պատասխաններում բողոքաբերի ցուցաբերած՝ վերլուծական և մեկնաբանման հմտությունները, կատարված վերլուծությունից համապատասխան եզրակացություն բխեցնելու և իրավաբանական գրավոր խոսք հստակ և տրամաբանորեն սահուն արտահայտելու ունակությունները խիստ թերի են, և այս չափանիշների կապակցությամբ Գնահատման հանձնաժողովի կողմից բողոքաբերի աշխատանքին տրված գնահատականները հիմնավորված են:

Ինչ վերաբերում է իրավիճակային խնդրի 1-ին և 2-րդ հարցերին բողոքաբերի կողմից տրված պատասխաններին, ապա Բողոքարկման հանձնաժողովն արձանագրում է, որ այդ պատասխաններում բողոքաբերը ցուցաբերել է մասնագիտական ոչ բավարար գիտելիքներ՝ դրսևորված Վ. Սիմոնյանի առաջին արարքը և Դ. Ավագանի արարքը նաև ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով չորակելով, Վ. Սիմոնյանի երկրորդ արարքը նաև ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-104-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով որակելով, ինչպես նաև Վ. Սիմոնյանի երկրորդ արարքը ոչ թե որպես պատվերով սպանության փորձի դրդչություն, այլ որպես պատվերով սպանության փորձի կազմակերպիչ որակելով:

Բացի այդ, թերի են նաև այս հարցերի կապակցությամբ բողոքաբերի կողմից ցուցաբերված վերլուծական և մեկնաբանման հմտությունները, կատարված վերլուծությունից համապատասխան եզրակացություն բխեցնելու և իրավաբանական գրավոր խոսք հստակ և տրամաբանորեն սահուն արտահայտելու ունակությունները:

բ. Քննարկելով ՀՀ քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածով նախատեսված հանցակազմի հատկանիշներին անդրադառնալու անհրաժեշտության բացակայության մասին բողոքաբերի կողմից նշված հանգամանքը՝ Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ

իրավիճակային 1-ին խնդրի տվյալները վկայել են անձանց արարքներում նշված հանցակազմի ակնհայտ բացակայության մասին, հետևաբար քննության մասնակիցներն այդ հանցակազմին անդրադառնալու անհրաժեշտություն, իրավամբ, չեն ունեցել:

գ. Անդրադառնալով գրավոր առաջադրանքի 2-րդ իրավիճակային խնդրի 5-րդ պատասխանի կապակցությամբ բողոքաբերի այն պնդմանը, որ 5-րդ հարցում մանրամասն վերլուծություն չի կատարվել՝ նկատի ունենալով ժամանակի սղությունը, բացի այդ, 4-րդ՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննիչ վերանայման վերաբերյալ հարցին պատասխանելիս արդեն իսկ իր կողմից համանման վերլուծություններ եղել են կատարված, Բողոքարկման հանձնաժողովը գտնում է որ այս հարցի կապակցությամբ բողոքաբերը դրսևորել է մասնագիտական բավարար գիտելիք՝ իրավամբ համարելով, որ վճռաբեկ բողոքը ենթակա է եղել վարույթ ընդունվելու, որպիսի հետևությունը, սակայն, բողոքաբերը չի պատճառաբանել:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքարկման հանձնաժողովը հիմնավորված չի համարում այն, որ գրավոր առաջադրանքի 2-րդ իրավիճակային խնդրի 5-րդ պատասխանի կապակցությամբ բողոքաբերի մասնագիտական գիտելիքները Գնահատման հանձնաժողովի կողմից գնահատվել են 0 միավորով՝ միաժամանակ փաստելով նշված հարցի կապակցությամբ բողոքաբերի ցուցաբերած վերլուծական և մեկնաբանման հմտություններին, կատարված վերլուծությունից համապատասխան եզրակացություն բխեցնելու և իրավաբանական գրավոր խոսք հստակ ու տրամաբանորեն սահուն արտահայտելու ունակություններին Գնահատան հանձնաժողովի կողմից տրված 0 միավորի հիմնավորվածությունը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքը պետք է բավարարել մասնակի, մասնավորապես, անհրաժեշտ է մասնակիորեն փոփոխել իրավիճակային 1-ին խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի պատասխաններին Գնահատման հանձնաժողովի անդամների կողմից տրված հանրագումարային գնահատականները, այն է՝ իրավիճակային 1-ին խնդրի 1-ին, 2-րդ և 3-րդ հարցերի պատասխանների վերստուգման արդյունքում Բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից ստուգաթերթերում մասամբ փոփոխված գնահատականների հանրագումարներր գումարել, որից հետո ստացված թիվր՝ 43-ր, բաժանել Բողոքարման հանձնաժողովի անդամների թվի վրա՝ 3-ի՝ ստանալով 14,3, իսկ ամբողջացված տարբերակով՝ 15 միջին գնահատականր:

Դրանից հետո հաշվարկել իրավիճակային 1-ին խնդրի 4-րդ և 5-րդ հարցերին Գնահատման հանձնաժողովի կողմից տրված հանրագումարային գնահատականների միջին գնահատականը՝ ստանալով 8 (56/7), անուհետև վերոհիյալ՝ 15 միջին գնահատականին գումարել նշված՝ 8 գնահատական՝ ստանալով 23:

Բացի այդ, Բողոքարկման հանձնաժողովը գտնում է, որ անհրաժեշտ է մասնակիորեն փոփոխել իրավիճակային 2-րդ խնդրի 5-րդ հարցի պատասխանին Գնահատման հանձնաժողովի անդամների կողմից տրված հանրագումարային գնահատականները, այն է՝ իրավիճակային 2-րդ խնդրի 5-րդ հարցի պատասխանի վերստուգման արդյունքում Բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից ստուգաթերթերում դրված գնահատականների հանրագումարներր գումարել, որից հետո ստացված թիվր՝ 6-ր, բաժանել բողոքարկման հանձնաժողովի անդամների թվի վրա՝ 3-ի՝ ստանալով 2 միջին գնահատականը:

Դրանից հետո հաշվարկել իրավիճակային 2-րդ խնդրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ հարցերին Գնահատման հանձնաժողովի կողմից տրված հանրագումարային գնահատականների միջին գնահատական՝ ստանալով 26 (182/7), անուհետև վերոհիյալ՝ 2 միջին գնահատականին գումարել նշված՝ 26 գնահատական՝ ստանալով 28:

Այսպիսով, վերոգրյալի հիման վրա, արձանագրվում է, որ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի բողոքը Բողոքարկման հանձնաժողովի կողմից մասնակիորեն բավարարելու արդյունքում իրավիճակային 1-ին խնդրից բողոքաբերի ստացած գնահատականը մնում է նույնը՝ կազմելով 24 միավոր (Բողոքարկման հանձնաժողովն իրավասու չէ մասնակցի բողոքի

հիման վրա կատարված ստուգման արդյունքում իջեցնելու Գնահատման հանձնաժողովի գնահատականը), իսկ իրավիճակային 2-րդ խնդրից բողոքաբերի ստացված գնահատականն ավելանում է 1 միավորով՝ կազմելով 28 միավոր՝ Գնահատման հանձնաժողովի կողմից արձանագրված 27 միավորի փոխարեն:

Վերջնաարդյունքում «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի աշխատանքի արդյունքը գնահատվում է 52 միավոր (24+28):

Վերոգրյալի հիման վրա, հիմք ընդունելով «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանդրական օրենքի 105.1. հոդվածի 4-րդ մասը, ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի 2020թ. սեպտեմբերի 14-ի N ԲԴԽ-60-Ո-137 որոշման 4-րդ հավելվածի 32-րդ, 33-րդ և 34-րդ կետերը՝ Բողոքարկման հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց

2020թ. նոյեմբերի 3-ին կայացած՝ դատավորների թեկնածուների ցուցակի քրեական մասնագիտացման բաժնի համալրման նպատակով անցկացված գրավոր քննության՝ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից Գնահատման հանձնաժողովի հրապարակած քննության արդյունքի դեմ ներկայացված բողոքը բավարարել մասնակի՝ քննության արդյունքում իրավիճակային 2-րդ խնդրից բողոքաբերի ստացած 27 միավոր ավելացնելով 1 միավորով, վերջնաարդյունքում փաստելով, որ «1793» ծածկագրով հանդես եկած մասնակցի կողմից որակավորման գրավոր քննության արդյունքում ստացած միավորների հանրագումարը 52-ն է:

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի նախագահ՝ **Ա. Մանուկյան**

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի անդամ՝ **Ն. Հովակիմյան**

Որակավորման գրավոր քննության
բողոքարկման հանձնաժողովի անդամ՝ **Դ. Քալայան**